ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» մարտի 2024 թվականի N 398

ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԻՑ ԻՐԱՎԱՍՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 01-ի N 68-Ա որոշմամբ հաստատված Չարենցավան համայնքի ավագանու կանոնակարգի 96-րդ կետի, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 15-ին անցկացվելիք երրորդ նստաշրջանի հերթական թիվ 3 նիստին ներկայացվող նախագծերի քննարկման համար սահմանել իրավասու հանձնաժողովներ.

1.1 Ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով՝

●/նախագիծ 21/ Չարենցավան համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

●/նախագիծ 22/ Չարենցավան համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով գումար հատկացնելու մասին:

●/նախագիծ 23/ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 104-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

●/նախագիծ 24/ Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:

1.2 *Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողով՝*

●/նախագիծ 25/ Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող Չարենցավան համայնք գյուղ Արզական թիվ 10 հասցեում գտնվող գույքը վարձակալությամբ տրամադրելու թույլտվություն տալու մասին:

●/նախագիծ 26/ Սեփականության իրավունքով քաղաքացուն պատկանող հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:

●/նախագիծ 27/ Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:

●/նախագիծ 28/ Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները վարձակալության իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

●/նախագիծ 29/ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 14-ի N 29 որոշման մեջ լրացում կատարելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**